ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետությանհր. Կառավարական տուն 3

"04" 04 2019թ. N 1Ի-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-ին մասով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 727-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքապետարանների աշխատակազմերի սոցիալական աշխատողների վերապատրաստման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

04.04.2019

X

VERIFIED OCSP 04.04.2019 15:01:48 GMT+4

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության տարածքային

կառավարման և զարգացման նախարարի

2019 թվականի 09. 09.-ի N 11-Ա հրամանի

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

N	**Թեմաների անվանումը**	**ժամաքանակը**
1.	***Տեղական ինքնակառավարումը և համայնքային ծառայությունը*** • Տեղական ինքնակառավարման համակարգը և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները պետական կառավարման համակարգի մարմինների հետ • Համայնքային ծառայությունը՝ որպես հանրային ծառայության ինքնուրույն տեսակ	**4**
2.	***Սոցիալական աշխատանքի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրություն*** • <<Համայնք>> հասկացության մեկնաբանությունը սոցիալական աշխատանքում • Տեղական ինքնակառավարումը և համայնքային	**18**

	ծառայությունները • Համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում • Սոցիալական պաշտպանության համակարգը ՀՀ-ում • Համայնքային սոցիալական աշխատանքի դերը ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում • Համայնքային սոցիալական աշխատողի համագործակցությունը ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական դերակատարների հետ • Համայնքային սոցիալական աշխատանքը երեխաների պաշտպանության համակարգում • Ընտանեկան բռնության հիմնախնդրի լուծումը համայնքային սոցիալական աշխատանքի համատեքստում - Ինչ է ընտանեկան բռնությունը - Որոնք են դրա հիմնական պատճառները, հետևանքները, տեսակները և ցուցիչները - Որն է համայնքային սոցիալական աշխատողի դերը ընտանեկան բռնության հիմնախնդրի կանխարգելման և լուծման գործում • Համայնքային սոցիալական աշխատանքը ընտանիքների ամրապնդման գործում. • Սոցիալական դեպքի վարումը համայնքում. - Սոցիալական դեպքի վարման նպատակները, - Սոցիալական դեպքի վարման փուլերը, - Համայնքում կիրառման առանձնահատկությունները • Համայնքային պլանավորումը, կազմակերպումը և զարգացումը՝ որպես համայնքային սոցիալական աշխատանքի ուղղություններ. - համայնքային պլանավորման - համայնքային կազմակերպման, - համայնքային զարգացման ուղղությամբ • Մասնագիտական տեխնիկաների կիրառումը համայնքային սոցիալական աշխատող-շահառու հարաբերություններում. • Տեղական սոցիալական ծրագրեր • Տեղական սոցիալական ծրագրի դերը համայնքի զարգացման գործում. <<Տեղական սոցիալական ծրագիր>> հասկացության մեկնաբանությունը	

	• Տեղական սոցիալական ծրագրի հիմնական բաղադրիչները • Տեղական սոցիալական ծրագրի մշակմանը ներկայացվող պահանջները • Տեղական սոցիալական ծրագրի մշակման փուլերը • Տեղական սոցիալական ծրագրի մշտադիտարկման (մոնիթորինգի) փուլերը, ընթացակարգերը և մեթոդաբանությունը • Տեղական սոցիալական ծրագրի իրագործման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը • Տեղական սոցիալական ծրագրի իրագործման քայլերը • Տեղական սոցիալական ծրագրի իրականացման արդյունքների գնահատումը • Համայնքային սոցիալական աշխատողի մասնակցությունը տեղական սոցիալական ծրագրի մշակման, իրականացման, մշտադիտարկման և արդյունքների գնահատման ընթացքում	
3.	***Կառավարչական հմտություններ*** • Գործնական շփում, դրա դերը, մակարդակը և ձևերը • Ժամանակի ռացիոնալ օգտագործման և սեփական պլանների իրագործման տեխնոլոգիաներ • Վերադասի հետ փոխհարաբերությունների կառավարման տեխնոլոգիա • Դժգոհ մասնակիցների հետ աշխատանքի մեթոդները	**2**
ԸՆԴԱՄԵՆԸ		**24**